**New Testament Baptism**

## ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ՄԿՐՏՈՒԹԻՒ

*Որովհետեւ դուք հէնց այդ բանի մէջ կանչուեցաք որ Քրիստոս էլ չարչարուեցաւ եւ ձեզ էլ օրինակ թողեց որ նորա հետքերին հետեւիք.* II Պետրոս 2:21

*Եւ եղաւ այն օրերը՝ որ Յիսուսը եկաւ Գալիլեացիների Նազարեթիցը, եւ մկրտուեցաւ Յովհաննէսիցը Յորդանանի մէջ.* Մարկոսի 1:9

*Եւ բոլոր ժողովրդի մկրտուելու ժամանակին եղաւ, որ երբոր Յիսուսն էլ մկրտուեցաւ՝ եւ աղօթք էր անում, երկինքը բացուեցաւ:* Ղուկաս 3:21

*Ուրեմն գնացէք բոլոր ազգերը աշակերտեցէք, նորանց մկրտելով Հօր եւ Որդու եւ Սուրբ Հոգու անունովը.* Մատթէոսի 28:19

*Ով որ հաւատաց եւ մկրտուեցաւ կ'փրկուի. եւ ով որ չհաւատաց՝ կ'դատապարտուի:* Մարկոսի 16:16

*Եւ նորա անունովը ապաշխարութիւն եւ մեղքերի թողութիւն քարոզուի բոլոր ազգերի մէջ Երուսաղէմից սկսած.* Ղուկաս 24:47

*Հիմա թող ստոյգ գիտենայ Իսրայէլի բոլոր տունը, որ «Աստուած նորան Տէր եւ Օծեալ արաւ, սոյն այս Յիսուսին, որին դուք խաչեցիք: Եւ երբոր այս լսեցին, սրտերումը զղջացին եւ ասեցին Պետրոսին եւ միւս առաքեալներին, Ի՞նչ անենք, մարդիկ եղբարք: Պետրոսն էլ նորանց ասեց. Ապաշխարեցէք՝ եւ ձեզանից ամեն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսի անունովը՝ մեղքերի թողութեան համար, եւ Սուրբ Հոգու պարգեւը կ'ընդունիք:* Գործք Առաքելոց 2:36-38

*Բայց երբ Փիլիպպոսին հաւատացին, որ Աստուծոյ թագաւորութեանը ու Յիսուս Քրիստոսին անունը կը քարոզէր, մկրտուեցան թէ՛ այրեր եւ թէ՛ կիներ: (Վասն զի դեռ ո՛չ մէկուն վրայ իջած չէր, հապա միայն Տէր Յիսուսին անունովը մկրտուած էին:)* Գործք Առաքելոց 8:12,16

*Փիլիպպոս իր բերանը բացաւ եւ գրքին այս* խօսքէն *սկսելով՝ Յիսուսը քարոզեց անոր: Երբ* իրենց *ճամբան կ'երթային, ջուրի մը քով եկան: Ներքինին ըսաւ. «Ահա՛ ջուր, ալ ի՞նչ բան զիս կ'արգիլէ մկրտուելէ»: [Եւ Փիլիպպոս ըսաւ անոր. «Եթէ քու բոլոր սրտովըդ կը հաւատաս՝ կարելի է»: Անիկա պատասխան տուաւ ու ըսաւ. «Կը հաւատամ թէ Յիսուս Քրիստոս Որդի Աստուծոյ է»:] Ու հրաման ըրաւ որ կառքը կայնեցընեն: Երկուքն ալ իջան: Փիլիպպոս ներքինին մկրտեց:* Գործք Առաքելոց 8:35 - 38

*...«Սաւո՛ւղ եղբայր, Տէ՛րը զիս ղրկեց, այն Յիսո՛ւսը, որ ճամբուն մէջ քեզի երեւցաւ, երբ կու գայիր, որպէս զի տեսութիւնդ ստանաս ու Սուրբ Հոգիով լեցուիս»: Շուտ մ՛ը անոր աչքերէն թեփերու պէս* բաներ *ինկան եւ իսկո՛յն տեսաւ ու ելաւ մկրտուեցաւ:* Գործք Առաքելոց 9:17,18

*Հիմա, ալ ի՞նչ կ'ուշանաս: Ելի՛ր, մկրտուէ՛ու մեղքերդ լուա՛յ* (Ոմանք. *Տէրոջը*) *անոր անունը կանչելով»:* Գործք Առաքելոց 22:16